

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 42/20

ք.Երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով վարչական ակտը վերադասության կարգով բողոքարկված լինելու պայմաններում վճարված գումարները հարկային մարմնի կողմից ակտի մարմանն ուղղվելու դեմ «ԴԱՎԻԹ-90» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 06.04.2018թ. N1010787/1 հանձնարարագրի համաձայն «Դավիթ-90» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) իրականացվել է համալիր հարկային վերստուգում: Վերստուգման համար հիմք է հանդիսացել ՀՀ ՀՔԾ ՀԿԳ ավագ քննիչ Ս.Գ.Առաքելյանի 16.03.2018թ. համալիր հարկային վերստուգում նշանակելու մասին որոշումը: Որոշմանը կից բողոքաբերին ուղարկվել է նաև նախաքննության ընթացքում ձեռք բերված նյութերը (հարցաքննության արձանագրություններ, առերեսման արձանագրություններ և այլ փաստաթղթեր), որոնք պարունակում են իրարամերժ և հակասական տեղեկություններ: Հարկային մարմինը վերստուգման արդյունքներն ամփոփելուց հետո վարչական ակտ կազմելիս հիմք է ընդունվել կողմերից միայն մեկի ներկայացրած տվյալները և կազմվել է N1010787/1 ակտը, որով ընկերությանն առաջադրել է լրացուցիչ պարտավորություն շահութա-հարկի տեսքով 8009150 դրամի չափով: Քանի որ հարկային մարմինն իրականացրել է համալիր հարկային վերստուգում, ակտի մեջ ներառվել է նաև ստուգման ժամանակ առաջադրված ԱԱՀ-ի գծով խախտումները, որոնք արդեն վճարված են: Ընդհանուր վերստուգմամբ կազմված ակտով առաջադրված հարկային պարտավորությունների գումարը կազմել է 9325406 դրամ, որից 1316256 դրամն արդեն իսկ առաջադրված է եղել նախորդ ստուգման ակտով: Ընկերության գործադիր մարմինը համաձայն չի եղել ստուգման ակտի արդյունքների հետ, որի պատճառով դիմում-գանգատ է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողով: Սակայն հարկային մարմինը, խախտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի պահանջները, ընկերության միասնական հաշվից գանձել է ամբողջ 9325406 դրամը, հաշվի չառնելով անգամ այն հանգամանքը, որ այդ գումարից 1316256 դրամն արդեն արձանագրված է եղել նախորդ ակտով և վճարված եղել: Հարկային մարմինը հաշվի չի առել այն հանգամանքը, որ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Հայտնելով վերը նշված փաստերը և հանգամանքները՝ ընկերությունը խնդրում է կատարել օրենքի պահանջը, հետ վերադարձնել ընկերությունից գանձված գումարները և դադարեցնել տույժերի անօրինական հաշվարկը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 06.04.2018թ. N1010787/1 հանձնարարագրի համաձայն (հիմք՝ ՀՀ ՀՔԾ ՀԿԳ ավագ քննիչ Ս.Գ.Առաքելյանի 16.03.2018թ. համալիր հարկային վերստուգում

նշանակելու մասին որոշումը) «ԴԱՎԻԹ-90» ՍՊԸ-ում իրականացվել է համալիր հարկային վերստուգում: Արդյունքում 17.05.2018թ. կազմվել է փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության N1010787/1 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ):

«ԴԱՎԻԹ-90» ՍՊԸ կողմից Ակտի դեմ դիմում-բողոք է բերվել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Հանձնաժողովի 22.06.2018թ. նիստում քննության է առնվել Ակտի դեմ ընկերության կողմից բերված դիմում-բողոքը: Արդյունքում կայացվել է N35/1 որոշումը, որի համաձայն «ԴԱՎԻԹ-90» ՍՊԸ դիմում-բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը, բացառությամբ՝

ա) օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման.

բ) այն դեպքերի, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով:

Նույն մասով նախատեսված դեպքերում վարչական ակտի անհապաղ կատարման պահանջը (շահը) պետք է հիմնավորվի գրավոր: Հիմնավորում չի պահանջվում, եթե վարչական ակտի կատարումը կասեցնելու հետևանքով կարող է անմիջականորեն վտանգվել անձանց կյանքը, առողջությունը կամ սեփականությունը, և այդ վտանգը կանխելու համար վարչական մարմինը հարկադրված կլինի ձեռնարկել արտակարգ միջոցներ, ինչպես նաև, երբ վտանգն արդեն իսկ առաջացել է:

Տվյալ դեպքում, քանի որ բացակայում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական ակտի անհապաղ կատարման պահանջը, հետևապես՝ Ակտի կատարումն օրենքի ուժով՝ նշված ակտի դեմ բերված վարչական բողոքն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում մուտքագրվելու օրվանից (21.05.2018թ.) համարվել է կասեցված: Այսինքն, Ակտը վարչական կարգով վիճարկվելու պայմաններում հարկային մարմինը պետք է ձեռնպահ մնար դրա կատարմանն ուղղված գործողություններից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով սույն հարցի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված նախադեպային որոշումները, Հանձնաժողովը գտնում է, որ Ակտի դեմ բերված դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում մուտք լինելու օրվանից ընկերության կողմից վճարված այն գումարները, որոնք ուղղվել են Ակտով առաջադրված պարտավորությունների մարմանը, ենթակա են վերահաշվարկման:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Վարչական ակտը վերադասության կարգով բողոքարկված լինելու պայմաններում վճարված գումարները հարկային մարմնի կողմից ակտի մարմանն ուղղվելու դեմ «ԴԱՎԻԹ-90» ՍՊԸ դիմում-բողոքը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ